# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-21/77-Պ

ք. Երևան 28-ը դեկտեմբերի 2021թ.

**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը** (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

**«Սպեցտեխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Միխաիլ Բլոխինի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ, յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պատվիրատուին պատկանող տարածքի ձյան մաքրման և այլ ծառայությունները սույն Պայմանագրի Ծառայությունների մատուցման համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցով (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել սույն Պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծառայությունները մատուցվում են Պատվիրատուի կողմից Կատարողին ներկայացված պատվերի հիման վրա՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում: Պատվերը ներկայացնելիս պետք է նշվեն պատվերի կատարման նախընտրելի օրը և ժամը: Պատվերները ներկայացվում են սույն Պայմանագրի կատարման նպատակով Պատվիրատուի կողմից նշանակված կոնտակտային անձից Կատարողին հեռախոսազանգի միջոցով բանավոր կերպով: Կողմերն արձանագրում են, որ Կատարողը տեղեկացված և համաձայն է, որ պատվերի ներկայացման և դրա բովանդակության ապացուցման նպատակով, Կատարողին պատվերի ներկայացման նպատակով կատարվող հեռախոսազանգերը Պատվիրատուի կողմից կարող են ձայնագրվել:

1.3. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրել սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

1.4. Ծառայությունները մատուցվում են 2022թ. հունվարի 01-ից մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և սահմանված ժամկետներում,

2.1.2. պահանջել Կատարողից իրեն տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,

2.1.3. ստուգել Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.4. ցուցումներ տալ Կատարողին Ծառայությունների կատարման վերաբերյալ՝ սույն Պայմանագրի շրջանակներում,

2.1.5. պահանջել Կատարողից աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս,

2.1.6. Պահանջել Կատարողից հատուցել Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուին (ներառյալ գույքին) պատճառված վնասը ամբողջությամբ:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին,

2.2.2. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում,

2.2.3. Սույն Պայմանագրի կատարման համար Կատարողին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը,

2.2.4. Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ լինելու դեպքում Կատարողին, Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցին տրամադրել Պատվիրատուի տարածք մուտք գործելու հնարավորություն:

2.3. **Կատարողը իրավունք ունի՝**

2.3.1. Պատվիրատուից պահանջել իրեն տրամադրել սույն Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

2.4. **Կատարողը պարտավոր է՝**

2.4.1. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը երրորդ անձանց ներգրավումը Կատարողի կողմից հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության հիման վրա,

2.4.2. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ՀՀ օրենսդրության պահանջներին, ինչպես նաև Ծառայությունների մատուցումը կարգավորող կիրառելի նորմերին, կանոններին և ստանդարտներին համապատասխան,

2.4.3. Պատվիրատուի պահանջով վերջինիս ներկայացնել Ծառայությունների մատուցման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն,

2.4.4. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս,

2.4.5. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տրված ցուցումներին,

2.4.6. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել Ծառայությունների մատուցման արդյունքում հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մեկ ժամի արժեքը կազմում է 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ բոլոր կիրառելի հարկերը: Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը չի կարող գերազանցել 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամը: Սույն կետում նշված գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով, տեխնիկական միջոցի վառելիքի ծախսը:

3.2. Կատարողը պարտավորվում է սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գումարի չափով Ծառայություններ մատուցելուց հետո տեղեկացնել Պատվիրատուին Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափի սպառման վերաբերյալ, սույն Պայմանագրի

շրջանակներում չընդունել և չկատարել Ծառայությունների մատուցման նոր պատվերներ՝ մինչև հակառակի վերաբերյալ Կողմերի միջև գրավոր համաձայնության ձեռքբերումը: Սույն կետով սահմանված ընդհանուր կանոնը կիրառելի է նաև այն դեպքի նկատմամբ, երբ Պայմանագրով համաձայնեցված գնային սահմանաչափը դեռևս սպառված չէ, սակայն Ծառայությունների մատուցման հերթական պատվերի կատարումը կհանգեցնի սույն Պայմանագրի 3.1 կետով սահմանված գնային սահմանաչափի անցման:

3.3. Պատվիրատուն սույն Պայմանագրով նախատեսված վճարումն իրականացնում է համապատասխան հանձնման-ընդունման ակտի երկկողմանի հաստատվելուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

3.4. Սույն Պայմանագրով վճարումը իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.5. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը:

3.6. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Սույն Պայմանագրի շրջանակներում յուրաքանչյուր օրացույցային ամսվա ավարտից հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում տվյալ ամսվա մատուցված Ծառայությունների վերաբերյալ իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտ:

4.2. Հանձնման-ընդունման ակտը Կատարողի կողմից ներկայացնելու օրվանից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը, ծավալը (ժամերի քանակը) և առարկությունների բացակայության դեպքում հաստատում է հանձնման-ընդունման ակտը:

4.3. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ և/կամ շեղումներ, Պատվիրատուն պարտավորվում է սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնել հանձնման-ընդունման ակտի չհաստատման հիմնավորում, նշելով հայտնաբերված թերությունները և/կամ շեղումները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետները:

4.4. Այն դեպքում, եթե Պատվիրատուն սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում չի հաստատում հանձնման-ընդունման ակտը և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա հանձնման-ընդունման ակտը համարվում է հաստատված սույն Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետին հաջորդող առաջին աշխատանքային օրը և Պատվիրատուն պարտավորվում է վճարումը կատարել սույն Պայմանագրի 3.2 կետին համապատասխան:

4.5. Եթե որևէ օրացույցային ամսվա ընթացքում Ծառայություններ չեն մատուցվում, այդ ամսվա համար հանձնման-ընդունման ակտ չի կազմվում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով նախատեսված պարտականությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.2. Կատարողի կողմից սույն Պայմանագրի կատարման ժամկետների (Կողմերի միջև յուրաքանչյուր պատվերի կատարման համաձայնեցված ժամկետ) խախտման դեպքում Պատվիրատուն իրավունք

ունի Կատարողից գանձել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային ժամվա համար սույն Պայմանագրի արժեքի 0,1 տոկոսի չափով:

5.3. Սույն Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.4. Պատվիրատուի կողմից վճարումը ուշացնելու դեպքում Կատարողը իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ վճարման ենթակա գումարի 0,1 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար, բայց ոչ ավելի քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.5. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6. Տուժանքների վճարումը չի ազատում Կողմերին սույն Պայմանագրով ստանձնած պարտականությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

## 6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

7.1. Սույն Պայմանագրի վերաբերյալ բանակցություններին, պայմաններին, արժեքին, Պայմանագրից բխող գործողություններին առնչվող ողջ տեղեկատվությունը (այդ թվում, փաստաթղթերը), բացառությամբ զանգվածային տեղեկատվության միջոցներում առկա տեղեկատվության (եթե այդպիսին առկա է), գաղտնի է և չի կարող տրամադրվել որևէ երրորդ կողմի, բացառությամբ մյուս Կողմի նախապես տրամադրված գրավոր համաձայնության կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավոր են սույն Պայմանագրի գործողության ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո 3 (երեք) տարվա ընթացքում, ապահովել համապատասխան տեղեկատվության գաղտնիությունը և պատշաճ պաշտպանությունը, գործադրելով առնվազն այնպիսի ջանքեր, ինչպիսիք կգործադրվեին իրենց իսկ նման տեղեկատվության պաշտպանության համար:

## 8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև դրանում նախատեսված պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.2. Սույն Պայմանագիրը ստորագրող Պատվիրատուի ներկայացուցիչը սույնով հաստատում է, որ ունի բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու

Պատվիրատուին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում: Սույնով Կատարողը հավաստում է, որ հանդիսանում է գործունակ քաղաքացի և գիտակցում ու ընդունում է իր կողմից ստորագրված Պայմանագրով ծագող պարտավորությունների բնույթը, էությունը:

8.3. Կողմերից որևէ մեկը իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

8.4. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.5. Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

8.6. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից, կնիքի առկայության դեպքում նաև կնքված է:

8.7. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել սույն Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.8. Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, վերջինս պարտավոր է պատշաճ կերպով գրավոր ծանուցի մյուս Կողմին այդ մասին՝ համապատասխան փոփոխությունից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

8.9. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

8.10. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պատվիրատու** | **Կատարող** |
|---|---|
| **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ** | **«Սպեցտեխ» ՍՊԸ** |
| Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ. Հովսեփյան 26 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Շահումյան 4 փ., տ. 13ա |
| ՀՎՀՀ՝ 01540062 | ՀՎՀՀ՝ 01280283 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ՝ 2470102796740000 | Հ/Հ՝ 2050022474971001 |
| **Հովհաննես Մովսիսյան** | **Միխաիլ Բլոխին** |
| *Գործադիր տնօրեն* | *Տնօրեն* |